

**Փոխմարզպետ Նունե Մովսիսյանի ելույթը ծննդատներ կատարած այցելության  
ժամանակ**

1.08.2013թ.

Ողջունում եմ բոլոր մայրերին: Յուրաքանչյուր երեխայի ծննդյան հետ մեզ լուր է գալիս, որ Աստված մեզ հետ է: Ընդունեք Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորանքը ձեզ՝ նորածինների լույս աշխարհ գալու կապակցությամբ:

Մեր այցելությունը մարզի բոլոր տարածաշրջանների հիվանդանոցներ նպատակ ունի անձամբ շնորհավորելու ձեզ եւ ոգետրելու՝ մեր մարզի ազգաբնակչության թիվը ավելացնելու համար\;

Շնորհավոր ծնունդդ, փոքրիկ: Կնունքդ որտեղ կուզես, բայց հարսանիքդ՝ միայն մայր Հայաստանում: Շնորհակալություն եմ հայտնում մարզի բոլոր բուժաշխատողներին՝ իրենց նվիրյալ աշխատանքի համար: